Տեղական իշխանութիւնների արգելքը ընդօրինակելու արձանագրութիւնը հետեւանք է թիւրիմացութեան։ Ամեն ոք ազատ է իւր տեսածը կարդալ և արտագրել, ջոկ բան է պեղումն, որի համար հարկաւոր է պատշաճ թոյլտուութիւն։

Գ. Տ. Աղէքսանդրեանը ցաւելով յայտնում է, որ չէ կարողացել արձանագրութեան տողերն ու գնտակով վնասուած տեղերը համարել։

Սակայն յաջողել է ափ ափոյ մի քանի տառ արտագրել, որ և տպագրում ենք Արարատի մէջ։



Յուսիկ Արհեպիսկոպոս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Խնդրում եմ «Արարատի» խմբագրութեան գրութեանս տեղ տալ թերթի յունիսի համարում։

«Արարատի» այս տարուայ մայիսի համարում պ. Կանայեանը իր «նամակ խմբագրութեան» գլխումն մէջ գրում է. «. . . . . բաւական չէ միայն վերստուգութիւնը, որի համար ես հէնց տարուայ սկզբից քանիցս խնդրեցի Ռոստոմեանից, և որ տակաւին տեղի չունեցաւ . . . . »։

Չեմ յիշում, որ պ. Կանայեանը երբ և իցէ ինձնից այդպիսի բան լինի խնդրած. յամենայն դէպս մինչև ճեմարանի տարեկան հանդէսը ու զեկուցումս Վեհափառ Հայրապետին ներկայացնելը չէր կարող խնդրել։ Յիշում եմ միայն, որ պ. Կանայեանը, որը ահա՛ երեք տարի է, ինչ գրադարանապետ է, մի քանի անգամ ինձ ասել է. «Ինքս մատենադարանը ընդունել եմ ներկայ խառնակ դրութեան մէջ»։ Ստուգումը, թէև ոչ լրիւ, արդէն կայացել է։ Ուս. պ. Խոստիկեանը և վեր. պ. Աոլանեանը, որոնց յանձնուած էր այդ, արդէն ստուգել են 8595 *գիրք, պարզել են* 459 *գրքի կորուստ և* 2662 *գրքի համարի տակ չլինելը։ Կազմուած է և ներկայացրուած է Վեհափառ Հայրապետին երկու արձանագրութիւն, որոնցից մէկը՝ կազմած* 15-*ին յունուարի, մի քանի անգամ եղել է պ. Կանայեանի ձեռին։ Պ. Կանայեանը, իբրև մատենադարանապետ պէտք է որ նկատած լինէր պ. Աոլանեանին և պ. Խոստիկեանին, որոնք աշխատում էին մատենադարանում։*

Մ. Ռոստոմեան.

11-*ին յունիսի* 1910 *թ.*
Էջմիածին։